

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՆՔԵՐՈՒՆ
ԵՒ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՊԱՀՈՒԱԾ
ՍՈՒՐԲԵՐՈՒ ՄԱՍՈՒՆՔՆԵՐ
ԵՒ
ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Առիթով մը անդրադարձեր էի Հայաստանի հայկական վանքերուն եւ եկեղեցիներուն մէջ դարերու ընթացքին մթերուած «մշակութային կորուստներ»ու մասին¹:

Մշակութային ա՛յլ կորուստներու շարքին, ընդհանուր եւ հակիրճ կերպով յիշեր էի նաեւ Հայաստանի վանական եւ եկեղեցական հաստատութիւններուն մէջ հաւաքուած կամ պահուած Սրբազան Առարկաները եւ Սուրբերու Մասունքները (նշխար):

Ներկայ աշխատանքս կ'անդրադառնայ ահա այս վերջիններու մասին միայն:

Սակայն, որպէսզի ըմբռնելի դառնայ սուրբերու մասունքներուն բազմութեան գոյութիւնը Հայաստանի մէջ, յարմար նկատեցի նաեւ շատ համառօտ ուրուագիծ մը տալ քրիստոնէական կրօնական մտածողութեան մէջ՝ սուրբերու եւ անոնց մասունքներուն հանդէպ ձեւացած յարգանքի եւ պաշտամունքի մասին:

1. Տե՛ս ԵԱՐՏԸՄԵԱՆ Հ. ՏԱՀԱՏ ՎՐԴ., Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896ի եւ 1915-1925ի տարիներուն, Վենետիկ, 1995:

**ՍՈՒՐԲԵՐՈՒ ՄԱՍՈՒՆԻՔՆԵՐՈՒՆ ՅԱՐԳԱՆՔԸ
ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ՄԵՋ**

«Մասունք» կամ «Նշխար սրբոց կոչեմք զմասն մարմնոյ մոցա կամ զոսկեբացն եւ զհամդերձից, եւ զայլ ամեմայն՝ յոր հուպ եղիւ մարմին մոցա եւ կամ առին զայն ի կիր»²:

Ա՛յլ խօսքով, «մասունք» կամ «նշխար» կը կոչուի ինչ որ սրբացած անձնաւորութեան մը մահէն ետք կը մնայ․ մարմին, մարմնի զանազան մասեր, ոսկորներ, մազ, ատամ, չորցած արիւն, երբեմն նոյն անձին գործածած առարկաները, զգեստները եւ ամէն ինչ որ անոր մարմինին հետ շփուած ունեցած է:

Այս մասունքները կը մեծարուին մարդոց կամ հաւատացեալներուն կողմէ, որովհետեւ սուրբերը՝ իրենց հաւատաւոր ու հերոսական կեանքով, նահատակութեամբ եւ իրենց կեանքին իսկ օրինակով ու բացառիկ վարքազիծով, վկաները դարձան իրենց հաւատքին, որոնց յիշատակը, մահէն ետք, կը շնորունակէ ապրիլ իբրեւ սրբազան արժէք:

Քրիստոնէութեան առաջին դարերուն, հաւատացեալներու կրօնական կեանքին մէջ, հաւատքի համար նահատակուած մարտիրոսները կամ քրիստոնէական կեանքով սրբացած վկաները փաստօրէն հիմը կազմեցին մասունքներու մեծարանքին:

Ասկէ սկիզբ առաւ նաեւ մարտիրոսներու եւ ընդհանուր սուրբերուն ո՛չ միայն ֆիզիքական մարմինին հանդէպ յարգանք եւ յատուկ մեծարանք, այլեւ անոնց պատկանած եւ գործածած զգեստներուն եւ առարկաներուն հանդէպ․ մարմնին կամ ոսկորներուն հետ նաեւ քրիստոնէական հաւատքի խոստովանութեան համար թափած արիւն, մազ, ատամ, եղունգ, սպասներ, ճրագաման, ձէթ, թաշկինակ, քօղ, զգեստ, գդակ, ճողաթափ կամ ոտնաման, զաւազան, կալանաւորութեան համար գործածուած շղթաներ, չարչարանքի գործիքներ, քարկոծումի քարեր, դամբան, գերեզմանէն առնուած ճող, փոշի եւ նման յիշատակի զանազան առարկաներ:

Քրիստոնէութեան առաջին դարերուն, քրիստոնեաներու կեանքին մէջ մասունքներուն յարգանքը ո՛չ միայն կրօնական պարզ արտայայտութիւն մը դարձաւ՝ հանդէպ մարտիրոսներու, վկաներու, սրբութեան համբաւով վախճանած ճգնաւորներու եւ ճոզեւորականներու, այլեւ յաջորդաբար զարգացաւ իբրեւ կրօ-

2. ՍԱՀԱԿԵԱՆ (ԶԱՐԲՀԱՆԱԼԵԱՆ) Հ. ԳԱՐՅԳԻՆ ՎՐԴ., Յաղագս քարե-խօսութեամբ սրբոց եւ զմշխարս մոցա եւ գպատկերս մեծարելոյ, Վենետիկ, 1852, էջ 274-275:

նական ջերմեռանդուլթիւն եւ պաշտամունք, այնքան որ, Դիոկղետիանոս Կայսրը, համաձայն Ազաթանգեղոսի, կը խորհէր թէ քրիստոնեաները «սպաննուածնրու ոսկորնիրը կը պաշտեն», փոխանակ ըսելու թէ կը մեծարեն: Մասունքներուն հանդէպ յարգանքի ու պաշտամունքի ձեւերն էին՝ աղօթք, երկրպագութիւն, համբոյր, ծնրադրութիւն եւ խնկարկուլթիւն³:

Հոն, ուր քրիստոնեաներ կը նահատակուէին, հոն կը փութային հաւատացեալները, ամփոփելու համար զանոնք յատուկ դամբարաններու, վկայարաններու մէջ եւ ապա նաեւ ցրուելու անոնց մասունքները քրիստոնեայ ա՛յլ համայնքներու մէջ՝ ընդհանրացնելու համար անոնց յիշատակին ոգեկոչումը եւ անոնց հաւատաւոր օրինակին ազդեցութիւնը:

Հաւատացեալներուն կողմէ սուրբերու մասունքներուն հանդէպ ցուցաբերուած կրօնական մեծարանքին շարժառիթները, ժամանակին, յատուկ նկատողութեան արժանացան Եկեղեցոյ Վարդապետներուն կամ Հայրապետներուն կողմէ: Վարդապետութեան կամ մարտիրոսագրութեան կողքին, դարերու ընթացքին սրբախօսական ճոխ գրականութիւն մըն ալ գոյացած է այս մասին, յատկապէս Չատագոփական գրութիւններով, գրուած կամ խօսուած ա՛յս կամ ա՛յդ սուրբին յիշատակի տօնակատարութեան առիթով:

Քրիստոնէական Հաւատքին հերոսները, հաւատարիմ իրենց կեանքին իսկ գինով ու նուիրումով, արժանի դարձան առաւելագոյն երախտագիտութեան, քրիստոնէական կեանքի ցայտուն օրինակ դառնալով բոլոր հաւատացեալներուն: Սուրբերուն մարմինները եղան Աստուծոյ սրբարար Հոգիին գործիքը՝ Քրիստոսի թշնամիներուն դէմ տարուած յաղթանակին համար, որովհետեւ իրենց մարմիններուն մէջ դիմադրեցին եւ յաղթեցին ցաւերուն, չարչարանքներուն. այնպէս որ սուրբերուն մասունքները մասնայատուկ նշանակութիւն եւ արժէք ստացան, նոյնիսկ երբ անոնց հոգին՝ մարմինէն բաժնուեցաւ:

Կրօնական ա՛յս մտածողութեան իբր հետեւանք, սուրբերուն մասունքները, հաւատացեալներուն կողմէ, արժանացան յատուկ յարգանքի եւ յաջորդաբար ալ ջերմեռանդական պաշտամունքի: Նախապէս, այս յարգանքը եւ պաշտամունքը կեդրոնացած էր մարտիրոսներու, նահատակներու, վկաներու եւ բա-

3. Հմմտ. ՀԱՑՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ., Սրբոց Նշխարները, «Բազմավէպ», 1907, թիւ 1, էջ 6 եւ 11-12: Յօդուածին առաջին բաժինը տե՛ս «Բազմավէպ», 1906, թիւ 12, էջ 543-546: Նաեւ ՍԱՐԵԱՆ Հ. ՍՏԵՓԱՆՈՍ ՎՐԴ., Ընթացք տեսակամ աստուածաբանութեան, Վենետիկ, 1894, էջ 634-639:

ցայայտ սուրբերու դամբարանին կամ վկայարանին վրայ, հոն՝ ուր որ կը գտնուէր սուրբին մարմինը կամ մասունքը:

Ագաթանգեղոս կը պատմէ, օրինակ, թէ Սբ. Գրիգոր Լուսաւորիչի առաջին գործը եղաւ նորադարձ Հայաստանի անդրանիկ նահատակներուն՝ Հռիփսիմէի, Գայիանէի եւ միւս ընկերուհիներուն անթաղ մնացած մարմինները հողին յանձնել «Խաւատքով եւ մեծ երկիւղով» եւ անոնց գերեզմաններուն վրայ կանգնեց երեք վկայարաններ, ուր նահատակ սրբուհիները սկսան մեծարուիլ եւ կը շարունակուին մեծարուիլ մինչեւ այսօր⁴:

Ընդհանրապէս հին վկայարանները օժտուած էին սուրբերու, նահատակներու կամ վկաներու մարմիններով: Յաջորդաբար, սակայն (Դ. դարէն սկսեալ), կառուցուեցան ա՛յս կամ ա՛յդ սուրբին նուիրուած ուրիշ եկեղեցիներ կամ խորաններ, հոն տանելով ու զետեղելով նաեւ սիրուած կամ նպիսախրուած սուրբին մասունքներէն:

Ա՛յս ձեւով եւ ա՛յս մտադրութեամբ ահա ցրուած են սուրբերուն մասունքները աշխարհի զանազան կողմերը եւ հաւաքուած քրիստոնէական հաւատքի զանազան հին կեդրոններու մէջ (Աղեքսանդրիա, Անտիոք, Հռոմ, Կոստանդնուպոլիս, Երուսաղէմ, Աթէնք, Եւայլն):

Մասունքներու ուրիշ խումբ մը կը կազմեն տակաւին Յիսուսի ապրած Պաղեստինի սրբազան վայրերուն նիւթական յիշատակները. – Յիսուսի խաչափայտին բեկորները՝ Դ. դարէն սկսեալ, Յիսուսի խաչին բեւեռները, փշեպսակը, Եւայլն Եւայլն:

Մասունքներու հանդէպ կրօնական մեծարանքը ընդհանրացած երեւոյթ էր քրիստոնեայ բոլոր համայնքներուն մօտ⁵:

«ՍՈՒՐԲԵՐՈՒ ԲԱՐԵՆՍՕՍՈՒԹԻՒՆԸ»

Սուրբերու կամ սրբացած անձնաւորութիւններու հանդէպ ջերմեռանդութիւնը անկասկած կրօնական հիմ ունի: Կայ քրիստոսաբանական մտածողութիւն:

4. Հմմտ. Պատմութիւն, Դ. տիպ, Վենետիկ, 1983, Ի., էջ 166–168 եւ 27–27, էջ 562–567:
5. Հմմտ. *Enciclopedia Italiana Treccani*, հտ. 29, Հռոմ, 1936, էջ 36–38: Իսկ սուրբերու մասունքներուն հանդէպ հաւատացեալներու ցուցաբերած քրիստոնէական պաշտամունքի մասին ընդարձակօրէն տե՛ս ՍԱՀԱԿԵԱՆ (ԶԱՐԲ-ՀԱՆԱԼԵԱՆ) 2. ԳԱՐՆԳԻՆ ՎՐԴ., նշ. աշխ., գլ. Թ., էջ 273–306:

Սուրբերու մասունքներուն մէջ, Եկեղեցին Յիսուս Փրկիչի աստուածային ներկայութիւնը կը տեսնէ եւ անոնց մէջ կամ անոնց միջնորդութեամբ կամ բարեխօսութեամբ ալ ինքզինքին պաշտպան կը փնտռէ:

«Բարեխօսութիւն» կը նշանակէ բարեխօսել, միջնորդել (բարի վկայել) մէկու մը համար: Բրիստոնէական ընկալումով, բարեխօսութիւնը տեղի կ'ունենայ երկու տեսակով. —

Ա) Մարդոց համար՝ Յիսուսի բարեխօսութիւնը Հօր Աստուծոյ առջեւ եւ

Բ) Մարդոց համար՝ Սուրբերու բարեխօսութիւնը Աստուծոյ առջեւ:

Բրիստոնէայ եկեղեցիներու մէջ, սուրբերու յիշատակին նուիրուած արարողութիւններու ընթացքին, շարականներով եւ աղօթքներով դիմում կը կատարուի եւ կը խնդրուի սուրբերէն՝ որպէսզի անոնք բարեխօսեն ողջերու համար եւ այս կերպով միջնորդ դառնան Աստուծոյ եւ հաւատացեալներու միջեւ:

«Յաճախապատում ծառեր»-ու սրբազան հեղինակը կը գրէ. — «Այսպէս է իմանալ զսրբոցն զբարեխօսութիւն առ հաւատացեալ ժողովուրդն: Զի իւրեանց մտերիմ վաստակովքն, որք զմարմինս իւրեանց պատարագեցին յերկրի վասն անուանն Աստուծոյ ի հոս անուշից, եւ սուրբ հոգիք անցաւ հոգեւոր բարեխօսութեամբն զԱստուած յողորմութիւն աշխարհի ամեն»⁶:

Բրիստոնէայ Եկեղեցւոյ Վարդապետութեան մաս կազմող այս գործադրութիւնն է որ կը կոչուի «Սուրբերու բարեխօսութիւն»:

Սկզբնական դարերուն եւ Եկեղեցւոյ կազմակերպչական ժամանակաշրջաններուն՝ սուրբերու նշխարներ կը զետեղուէին եկեղեցիներու հիմերուն մէջ եւ այդ մասունքները քրիստոնէական հաւատքի աղբիւր եւ ոյժ կը հանդիսանային: Սուրբերուն աճիւնները կամ մասունքները մեծապէս կը յարգուէին եւ բազմաթիւ աստուածաբան Հայրեր եւ հաւատացեալներ անոնց միջնորդութեան կ'ընծայեն հոգեւոր մեծ ազդեցութիւն: Սուրբերը սոսկական մարդիկ չեն միայն, այլեւ հաւատքի քաջ ու դիտակից վկաներ. եւ ինչ որ սուրբերուն բարոյական եւ հոգեկան բացառիկ ոյժը կը կազմէ՝ անոնց եզակի փարումն է Յիսուս Փրկիչին, անոնց անձնական սերտ միութիւնն է Յիսուսի՝ Աստուծոյ Որդիին հետ⁷:

6. Յաճախապատում ծառք, Վենետիկ, 1954, ծառ ԺԶ., էջ 185:

7. «Մարտիրոսութեան» կրօնական-աստուածաբանական նշանակութեան եւ մեկնաբանութեան մասին տես Յաճախապատում ծառք, նշ. աշխ., ծառ

«Սուրբերու Բարեխօսութեան» եւ անոնց մասունքներուն Հանդէպ քրիստոնեաներու ունեցած հաւատքին, յարգանքին, մեծարանքին եւ սուրբերու հրաշագործ ոյժին ու դերի մասին՝ յատկանշական մտածողութիւն մը կը գտնենք Ղազար Փարպեցի պատմիչին մօտ:

Պարսիկներու Յազկերտ թագաւորը (Ե. դարուն), իր ենթակայ գինուորականներուն կը հրամայէ բանտարկուած Հայ հոգեւորականները Հանել բանտէն եւ գաղտնաբար քաղաքէն հեռու, անծանօթ եւ ամայի տեղ մը չարալլուկ տանջանքներով սպաննել եւ խստորէն կը յանձնարարէ որ ո՛չ ոք տեղեակ դառնայ սպանութեան վայրին եւ Հոն տանող ճամբուն, որովհետեւ «Մեմք յաճ եմք եւ ստոյգ կերպով գիտեմք թէ քրիստոնեաները այս առիթով աւելի կ'ուրախանան, քանի որ, կ'ըսեն, անոնք որ իրենց Աստուծոյ համար կը մեռնին՝ անոնց քակորներէն մոյմիսկ փշրանք մը եթէ մէկը իր տան մէջ ունենայ, այլեւ չար կամ խորամանկ մարդ ու ոգի անոր տան եւ սիրելիներուն չի՛ մօտեանար»⁸:

Ահաւասիկ, կրօնական ա՛յս մտածողութեան եւ այս Համոզումին գործադրութեան հետեւանքով է որ դարերու ընթացքին, նման քրիստոնեայ միւս Եկեղեցիներու, Հայաստանի մէջ ալ բազմաթիւ ու բազմաթիւ սուրբերու մասունքներ հաւաքուած են, ինչպէս պիտի տեսնենք ստորեւ:

Հայ Եկեղեցւոյ պաշտամունքային արարողութիւններու ընթացքին, շարականներուն մէջ սուրբերու մասունքները կը կոչուին. — «Դեղ ախտից», «Գանձ աստուածային», «Հոգեւոր գանձ», «Պարծանք աշխարհի», «Բարեխօս վասն մեր», «Տաճար են Սուրբ Հոգւոյն կենդանի ոսկերք (մարտիրոսաց)», «Բժիշկի հիւանդաց», «Աջ Տեառն ի վերայ սրբոց իւրոց եւ փառք իւր հանգուցեալ է յոսկերս սոցա, եւ հոգիք սոցա դասաւորեալ ընդ հրեշտակս», եւ այլն»⁹:

ԺԶ., էջ 182-186: ԱԻՆՏԻՖԵԱՆ Հ. ԳԱՐՐԻԷԼ ՎՐԴ., Նարեկյուն, Գ. տպ., Վենետիկ, 1859, էջ 434-435, ծանօթութիւններ թիւ 6, 12 եւ 13: Նմանապէս ՃՈՒՐՆԱՆ ՏԷՐ ՄԵՍՐՈՊ, Մարտիրոսները. վկայութիւն ամմոռամալի, «Աւետիք» (կրօնական պաշտօնաթերթ, Պէյրութ), 1997, թիւ 5-8, էջ 211-220:

8. ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ, Պատմութիւն Հայոց, Դ. տիպ. Վենետիկ, 1933, Ծ., էջ 279-280:

9. Այս մասին տես՝ ՍԱՀԱԿԵԱՆ (ԶԱՐԲԱՆԱԼԵԱՆ) Հ. ԳԱՐՆԳԻՆ ՎՐԴ., Եւ աշխ., գլ. Ը., Վարդապետութիւն Հայաստանայց Եկեղեցւոյ Յաղագս Բարեխօսութեան Սրբոց, էջ 240-275: ՄԱՅԻԼԵԱՆ Ս. Ս., ՈՍԿԵՓՈՐԻԿ, Կրօնական Գիտելիքների Համագիտարան, Երեւան, 1993, էջ 17-27:

**ՍՈՒՐԲԵՐՈՒ ՄԱՍՈՒՆՔՆԵՐՈՒՆ ՄԵԾԱՐԱՆՔԸ
ՀԱՅ ԿՐՕՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ**

Հայ Եկեղեցին, մէկ մասնիկը Քրիստոսի Տիեզերական-Ընդհանրական Եկեղեցւոյ, Գ. դարէն սկսեալ՝ կրօնական բարձր նշանակութիւն, արժէք եւ բացառիկ մեծարանք որդեգրած է ո՛չ միայն Հայ եւ քրիստոնեայ ա՛յլ Համանքներու պատկանող Սուրբերու (մարտիրոսներ, նահատակներ, վկաներ, սրբակենցաղ ճգնաւորներ, վանականներ, հոգեւորականներ), այլեւ անոնց մասունքներուն Հանդէպ:

Հայ Եկեղեցին անմասն չէր կրնար մնալ նահատակներու եւ սուրբերու Հանդէպ ստեղծուած յարգանքին եւ բարեպաշտութեան, որովհետեւ սերտօրէն եւ գործնականօրէն կը մասնակցէր Ընդհանրական Եկեղեցւոյ կեանքին:

Սուրբերու մասունքները, Հայոց մօտ ալ նկատուեցան սրբազան, չարխափան եւ հրաշագործ:

Հայերու մօտ, ինչպէս քրիստոնեայ միւս ժողովուրդներու եւ Համայնքներու մօտ, բազմաթիւ էին սիրուած եւ յարգուած մարտիրոսներու, նահատակներու, վկաներու, ճգնաւորներու եւ սրբակենցաղ անձերու մասունքները, որոնք քրիստոնէական հաւատքի եւ քրիստոնէական կեանքի սրբազան յիշատակը եւ վկայութիւնը կ'ամփոփէին իրենց մէջ՝ կրօնական ու բարեպաշտական աւանդութեան մը շունչով օծուած:

«Յաճախապատում ձառեր»ու սրբազան Հեղինակը սուրբերու մասունքներուն հրաշագործութիւնը կը Հաստատէ. «Նըշխարք ոսկերաց անցա (մարտիրոսաց) փրկութեան շնորհք ընծայեմ ի ժողովս հաւատացելոց, որպէս ամենեցուն է քաջայայտ. զի երեսցցի սերմ Աստուծոյ ի անցա նշխարս բնակեալ եւ նշանօքն ծանուցեալ յերկրի»¹⁰:

Ե. դարու ուրիշ Հեղինակ մը կը գրէ թէ «Մարդիկ, սուրբ մարտիրոսներու նշխարներուն պալաիմնով՝ կ'ազատին իրենց նեղութիւններէն, եւ ատով իսկ կը յայտնուի Աստուծոյ զօրութիւնը՝ որ սուրբերուն մէջ կայ»¹¹:

Սրբազան Հայրապետ մը դարձեալ նոյնը կը Հաստատէ. «Եթէ մէկը, հաւատով Աստուծոյ դիմէ եւ աղաչանքով մարտիրոսներու նշխարներուն պալաիմի՝ ցաւերու բժշկութիւն, հիւանդութիւններու եւ դեւերու հալածում եւ մեղքերու թողութիւն կ'ընդունի: ... Բաւարար չեղա՞նք մարտիրոսներու նշխար-

10. Յաճախապատում ձառք, նշ. աշխ., ձառ. ԺԶ., էջ 185:

11. ԵՁՆԻԿ, Եղծ Աղանդոց, Վենետիկ, 1826, Ա., Խ., էջ 84:

ները՝ որ մօտդ կը գտնուիմ ու միշտ քեզի համար կ'աղօթեմ եւ կամ սուրբ խաչի նշանը, որ ամէն օր մօտդ եւ տանդ մէջ է»¹²:

Հայերը ուխտի կ'երթային ա'յն վանքերը, եկեղեցիներն ու սրբավայրերը՝ ուր կը պահուէին ա'յս կամ ա'յն սուրբին նշխարները կամ անոնց հետ կապուած սրբազան որոշ առարկաները: Համբուրելով, հպելով, երկրպագութիւն ընելով, մոմ վառելով եւ ջերմեռանդ աղօթքներով՝ ուխտեր կը կատարէին եւ հոգեկան ու ֆիզիքական բժշկութիւններ կը ստանային կամ ձեռնարկի մը յաջողութիւնը ձեռք կը բերէին: Հաւատացեալները կամ ուխտաւորները, մասնաւորաբար կը համախմբուէին «հրաշագործ» սուրբերու նշխարներուն շուրջ: Բնականաբար, ուխտական այդ սրբավայրերն ալ, իրենց կարգին, կը ճոխանային յաճախող հաւատացեալներու նիւթական բազմատեսակ նուէրներով: Այս տեսակէտով ալ, ուխտաւորութիւնը կամ ուխտագնացութիւնը, բազմաթիւ վանքերու եւ եկեղեցիներու համար, տնտեսական կարեւորութիւն ստացաւ:

Տրամաբանական ընդհանուր հաշուարկումի մը համաձայն, եթէ ամէն մէկ հայկական վանք ու եկեղեցի 10-20 սուրբերու մասունք ունէր, «Հայոց կորսնցուցած քանկագլին մասունքներուն քիւր քրտուի հազարը կ'անցնի»¹³:

Նշանաւոր եղած է, օրինակ, Կիլիկիոյ Սկեւոս վանքին ունեցած մասունքներու հաւաքածոն: Կը յիշուի որ այս վանքին մէջ երկփեղկ պահարան մը կար՝ «Համակ պատեալ ոսկեգօծ արծաթի քիթեղամբ», ուր զետեղուած էին բազմաթիւ սուրբերու մասունքներ՝ սուրբերու նկարներով: Երեսն տուեր էին Կիլիկիոյ Հեթում Թագաւորը եւ Կոստանդին Բ. Կաթողիկոսը: Մասունքներու այս հարուստ պահարանը, անյայտ ժամանակով ու անծանօթ պատճառներով փոխադրուած է Իտալիա եւ 1828 թուականին՝ հայազգի մը յայտնագործած է Դոմինիկեան վանքերէն մէկուն մէջ: Յաջորդաբար ալ, 1880ին, ծախուած է Ֆրանսացիի մը (Փարիզ): Այս մանրամասնութիւնները մեզի հաղորդողն է Հ. Ղեւոնդ Վրդ. Ալիշան¹⁴:

12. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ, Ճառք, Բ. տիպ, Վենետիկ, 1860, էջ 196 եւ 202:
13. ԳԵՈՐԳ ՄԵՍՐՈՊ, Թուրքիոյ Հայոց կորուստները 1915-1922ին, տե՛ս «Հայաստանի Կոչնակ» (չաբաթաթերթ, Պոստոն), 1931, թիւ 26, էջ 808:
14. Հմմտ. Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 107-112, ուր տպուած է նաեւ յիշուած երկփեղկ գեղեցիկ պահարանին լուսանկարը: Տե՛ս նաեւ ՅՈՎՍԷՓ-ԵԱՆՑ ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔ., Խաղրակեամբ եւ Պոռշեամբ, Վաղարշապատ, 1928, էջ 190-200: ՈՍԿԵԱՆ Հ. ՀԱՄԱԶԱՍՊ ՎՐԴ., Կիլիկիայի Վանքերը, Վիեննա, 1957, էջ 10-18: ՆՈՐԱՅՐ ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ, Հայկական Խաչեր, Երուսաղէմ, 1991, էջ 30-32:

Յիշատակենք ուրիշ վկայութիւն մը եւս, որ կապուած է Արազած լեռան ստորոտին գտնուող պատմական Աղց կամ Աղցք գիւղաքաղաքին հետ: Տեղւոյն բնակիչները՝ աւանդութեամբ կը պատմեն թէ ժամանակին քսանչորս ուղտի բեռ սուրբերու մասունքներ բերուած ու զետեղուած են հոն, շատ հաւանօրէն Աղցից Վանքին մէջ¹⁵:

Կրօնական ու բարեպաշտական անկիւնէ դիտուած սուրբերու մասունքներուն եւ սրբազան առարկաներուն մեծ մասը ամփոփուած ու զետեղուած կ'ըլլար երբեմն ոսկի, երբեմն արծաթապատ, թանկարժէք կամ կիսաթանկարժէք քարերով զարդարուած փայտէ կամ մետաղէ տուփերու եւ պահպանակներու մէջ: Բնականաբար, արուեստի յարգի գործեր եւ ձեռագործ աշխատանքներ էին ասոնք հայ ոսկերիչներու եւ փորագրիչներու՝ յաճախ նաեւ հայ արուեստագէտ վանականներու կողմէ պատրաստուած:

«Հին ատեն, կը գրէ Օրմանեան Սրբազան, սովորութիւն չկար շարժական տուփերու մէջ զետեղել մասունքները, այլ նոյնիսկ փոքրիկ ոսկորի մասեր տեղափոխուած ատեն՝ գերեզմաններ ու գերեզմանաբարեր կը պատրաստուէին եւ ոսկորներու մասունքներ անոնց ներքեւ կը դրուէին. ա՛յս է պատճառը որ միեւնոյն սուրբի, օրինակ՝ Սուրբ Կարապետի, բազմաթիւ գերեզմաններ կը գտնուին զանազան տեղեր:

Երբ մասնատուփեր սկսան գործածուիլ, նախնական ձևը եղաւ մարմնին մէկ մասին նմանութիւնը շինել. ինչպէս գլուխը, աջը, ռոտը եւ անոնց մէջ փոքրիկ մասունք մը զետեղելով՝ ամբողջին անուրը տալ, այսինչ սուրբին աջը, այսինչ սուրբին գլուխը, եւ միեւնոյն սուրբին բազմաթիւ աջեր եւ գլուխներ ունենալ, որ երբեք ամբողջ նոյն անդամին ոսկորները չեն պարունակեր, այլ միայն անկէ փոքրիկ մաս մը եւ մինչեւ իսկ փշուր մը:

Աւելի ետքէն սկսան մասնանչի ձևով մասունքներու տուփեր, եւ վերջապէս (վիզէն) կախելու կամ բովը պահելու համար

15. Հմմտ. ՇԱՀԱՏՈՒՆԵԱՆՑ ՅՈՎՀ. ԵՊՍ., Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի եւ Հինգ Գաւառացի Արարատայ, Հտ. Բ., էջմիածին, 1842, էջ 67: Վկայութիւն կայ, որուն համաձայն Մուշի Սբ. Առաքելոց կամ Դազարու Վանքին մէջ հազարէ աւելի սուրբերու մասունքներ կային. Հմմտ. ԻնձիձեմԱՆ Հ. ՂՈՒՎԱՍ ՎՐՊ., Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 189: Ուրիշ վկայութիւններու համաձայն, Մաղարիայ կամ Եամբի Սբ. Ստեփանոս Նախավկայի վանքը շատ շատ հարուստ եղած է սրբազան մասունքներով. տե՛ս ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Վասպուրական-Վանի Վանքերը, Հտ. Բ., նշ. աշխ., էջ 565-567:

մանր տուփեր ալ գործածական եղան, լատիմներու հետեւողութեամբ: Նոյն՝ հետեւողութեան արդիւնք է նոյն տուփին կամ մահանչին մէջ զանազան սուրբերու մասունքներ, մինչեւ իսկ քաղմաթիւ մասունքներ գետեղել»¹⁶:

Քրիստոնէական կրօնքի պաշտօնական որդեգրումէն ասդին, 1700 տարիներու երկար ժամանակաշրջանին, Հայոց հոգեւոր ու կրօնական մտածողութեան մէջ՝ «քրիստոնէական կեանքը» գործնականօրէն ապրելու եւ զանիկա արտայայտելու ջերմեռանդական կերպերէն մէկն էր սուրբերու հանդէպ պաշտամունքը, որ դարեր ու դարեր շարունակ իր յատուկ դրոշմը եւ դերը խաղացած է մեր ժողովուրդի քրիստոնէական-հոգեւոր կեանքէն ներս:

Մեր պատրաստած ցանկերը, անշուշտ, կատարեալ չեն ու չեն կրնար ըլլալ: Սակայն բաւարարող գաղափար մը կրնան տալ սուրբերու մասունքներուն հանդէպ Հայոց ունեցած եզակի յարգանքին ու մեծարանքի մասին՝ քրիստոնէական մտածողութեան եւ քրիստոնէական հաւատքի վրայ խարսխուած: Ընդհանրապէս սուրբերու մասունքները եւ սրբազան միւս առարկաները կը գտնուէին Վանական հաստատութիւններու մէջ, ուր քրիստոնէական հաւատքը կ'ապրուէր տարբեր մթնոլորտի մէջ, տարբեր կերպերով եւ տարբեր կշռոյթով:

Ներկայ աշխատանքը, բնականաբար, չի՛ դբադիր մասունքներու պատմական ու վաւերագրական ըլլալու հարցերով: Այդ մէկը՝ տարբեր կալուած մըն է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՆՔԵՐՈՒՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՁ ՊԱՀՈՒԱԾ ՍՈՒՐԲԵՐՈՒ ՄԱՍՈՒՆՔՆԵՐ ԵՒ ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ

ԺԳ. դարուն ապրող Վարդան Վարդապետ Արեւելցի նշանաւոր հոգեւորականը, մատենագրական իր ծաւալուն ժառանգութեան մէջ ունի «Աշխարհացոյց» անունով փոքր երկ մը, որ Հայաստանի, Հայկական Կրիկիոյ եւ դրացի երկիրներուն հակիրճ աշխարհագրութիւնն է: Սակայն, աշխարհագրական աշխատութենէ մը աւելի, մեզի համար եզակի եւ թանկագին երկ

16. ՕՐՄԱՆԵԱՆ Մ. ԱՐՔ., Ծիսական Բառարան, Անթիլիաս, 1979, էջ 156: Հ. Վարդան Հացունի Վրդ.ը պատմական լայն տեղեկութիւններ հաւաքած է սուրբերու նշխարներու պահպանութեան մասին, տե՛ս Սրբոց նշխարները, «Բազմապէս», 1907, թիւ 1, էջ 9-11:

մըն է, որովհետեւ հեղինակը ո՛չ միայն հայկական վանքերը կը յիշատակէ հոն, այլեւ վանական այդ հաստատութիւններուն մէջ հաւաքուած ու պահուած սրբութիւնները.— խաչեր, մասունքներ, սրբազան առարկաներ, ինչպէս նաեւ նշանաւոր մարդոց գերեզմանները: Այս տեսակէտով, Վարդան Վրդ. Արեւելցիի այս գործը, պատմական մեր միւս դարաւոր վկայութիւններու կողքին՝ կը մնայ նման աշխատանքի մը արժէքաւոր աղբիւրներէն մէկը¹⁷:

Կ'անցնիմ սուրբերու մասունքներուն եւ սրբազան առարկաներու ցանկերու, որոնք պատրաստած եմ՝ սկսելով Հին Կտակարանեան մասունքէ մը (Նոյի Տապանի բեկորներէն), ապա կ'անցնիմ Քրիստոնէութեան Հիմնադիր՝ Յիսուսի չարչարանքներուն, խաչելութեան եւ Աստուածամօր հետ կապուած սրբազան զանազան առարկաներուն, յաջորդաբար ալ Յիսուսի առաքեալներուն, աշակերտներուն, ապա Հայ Եկեղեցւոյ առաջին առաքեալներուն, եւ հերթաբար ալ սրբազան հայրապետներուն, մարտիրոսներուն, վկաներուն եւ նահատակներուն:

– ՆՈՅԻ ՏԱՊԱՆ (փայտեայ բեկոր եւ կամ «Տախտակն սուրբ տապանին Նոյայ Նահապետին»): Այս մասունքէն կը զտնուէր հետեւեալ վանքերուն մէջ.—

Այրիվանք կամ Գեղարդավանք¹⁸,
Սբ. Նշանի Վանք (Սեբաստիա¹⁹),
Կապուտկողի Սբ. Յակոբի Վանք (Վասպուրական)²⁰:

– ԽԱԶԱՓԱՅՏ ՅԻՍՈՒՍԻ (բեկորներ՝ կոչուած «Սբ. Խաչ» կամ «Փայտ Կենաց» եւ կամ «Սբ. Նշան»): Բազմաթիւ են: Կը պահուէին հետեւեալ վանքերուն մէջ.—

Էջմիածնի Վանք՝ քանի մը բեկորներ²¹,

17. Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, քննական հրատարակութիւն Հայկ Պէրպլերեանի, Փարիզ, 1960:

18. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԱՐԵՒԵԼՑԻ, Աշխարհացոյց, նշ. աշխ., էջ 30:

19. ԱՌԱՔԵԼ ՊԱՏՐԻԿ, Պատմագիրք-Յուշամատեան Սեբաստիոյ, հտ. Ա., Պէրպլ., 1974, էջ 260:

20. ՈՍԿԵԱՆ Հ. ՀԱՄԱԶԱՍՊ, Վասպուրական-Վանի վանքերը, հտ. Ա., Վիեննա, 1940, էջ 163: Նոյան Տապանի պահարանի մասին տե՛ս ՅՈՎ-ՍԷՓԵԱՆՅՑ ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔ., Խաղրակեանք..., նշ. աշխ., էջ 250 եւ 266:

21. ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՅՑ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊՍ., Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ Հիմզ Գաւառացի Արարատայ, հտ. Ա., Էջմիածին, 1842, էջ 64-65, էջ 67-68 եւ էջ 74: ԻնձիձեԱՆ Հ. ՂՈՒԿԱՍ ՎՐԴ., Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 263-264:

- Գոմաց կամ Տատրակաբնակ Սբ. Աստուածածնի Վանք (Բա-
ղէշի շրջան)²²,
 Սբ. Նշանի Վանք (Սեբաստիա)²³,
 Տեղեբու Վանք²⁴,
 Սբ. Յովհաննէսի կամ Եղըղուտի Վանք²⁵,
 Վարագայ Վանք²⁶,
 Հաղբատի Վանք²⁷,
 Սանահինի Վանք²⁸,
 Սբ. Նշանի Վանք (Ծովք Լճակին մէջ՝ կղզի)²⁹,
 Աւետարանոցի Կուսանաց Անապատ³⁰,
 Կարմրակ Սբ. Աստուածածնի Վանք³¹,
 Աղբերիկի Վանք³²,
 Զագավանք³³,
 Սաղմոսավանք³⁴,
 Հրեշտակաբնակ Անապատ³⁵,

22. Ինձիձեւան ձ. Ղ. վրդ., Հայաստան, նշ. աշխ., էջ 174:
 23. Այս Վանքին մէջ քանի մը բեկորներ կային խաչափայտէն. Հմմտ. ՈՍ-
 ԿեԱն ձ. ՀԱՄԱԶԱՍՊ, Սեբաստիայի Վանքերը, Ա. Մաս, Սեբաստիա
 ֆաղափն Վանքերը, Վրեհնա, 1946, էջ 34-35: ՍԻՄԵՈՆ ԳՊԻՐ ԼԵՀԱՅԻ,
 Ողբգրութիւն, Վրեհնա, 1936, էջ 189, Հրտկ. Հ. Ն. Ակիհեան: ԱՌԱՔԵԼ
 ՊԱՏՐԻԿ, Յուշամտեան Սեբաստիոյ, նշ. աշխ., էջ 258-259:
 24. ՎԱՐԳԱՆ ՎՐԴ. ԱՐԵՒԵԼՑԻ, Աշխարհացոյց, նշ. աշխ., էջ 27-28:
 25. Ինձիձեւան ձ. Ղ. վրդ., Հայաստան, նշ. աշխ., էջ 198:
 26. ՎԱՐԳԱՆ ՎՐԴ. ԱՐԵՒԵԼՑԻ, Աշխարհացոյց, նշ. աշխ., էջ 38: ՀԱՅՈՒՆԻ
 Հ. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ., Զարչարանաց Նշխարներ Հայոց Քով, տե՛ս «Բազ-
 մավէպ», 1933, թիւ 9-10, էջ 404-405: ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Վասպուրականի
 Վանքերը, Հտ. Ա., նշ. աշխ., էջ 271, 275, 281, 321-323: ՆՈՐԱՅՐ ԱՐՔ.
 ԾՈՎԱԿԱՆ, Հայկական Խաչեր, Երուսաղէմ, 1991, էջ 7-10:
 27. ՈՍԿԵԱՆ Հ. ՀԱՄԱԶԱՍՊ, Գուգարփի Վանքերը, Վրեհնա, 1960, էջ 178,
 191 և 313-315:
 28. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ, Սամահին, տպ. Թիֆլիս, 1898, էջ 42-44:
 ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Գուգարփի Վանքերը, նշ. աշխ., էջ 77-78:
 29. ՍԻՄԵՈՆ ԳՊԻՐ ԼԵՀԱՅԻ, Ողբգրութիւն, նշ. աշխ., էջ 202-203: ՈՍԿԵԱՆ
 Հ. Հ., Սեբաստիայի, Խարբերդի, Տիարպփիի եւ Տրապիզոնի մահանգ-
 ներու Վանքերը, Վրեհնա, 1962, էջ 101-102:
 30. ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Արցախի Վանքերը, Վրեհնա, 1953, էջ 31:
 31. ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Վասպուրական-Վանի Վանքերը, Հտ. Ա., նշ. աշխ., էջ
 184-185:
 32. ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Տարօն-Տուրուբերանի Վանքերը, Վրեհնա, 1953, էջ 134-
 135: ՆՈՐԱՅՐ ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ, Հայկական Խաչեր, նշ. աշխ., էջ 1-2:
 33. «Գեառարգել Սբ. Նշան» Պետրոս Գետազարձ Կաթողիկոսի տե՛ս ՎԱՐԳԱՆ
 ՎՐԴ. ԱՐԵՒԵԼՑԻ, Աշխարհացոյց, նշ. աշխ., էջ 14 և 31: ՆՈՐԱՅՐ ԱՐՔ.
 ԾՈՎԱԿԱՆ, Հայկական Խաչեր, նշ. աշխ., էջ 10-13:
 34. ՎԱՐԳԱՆ ՎՐԴ. ԱՐԵՒԵԼՑԻ, Աշխարհացոյց, նշ. աշխ., էջ 15 և 26-27:
 35. ՎԱՐԳԱՆ ՎՐԴ. ԱՐԵՒԵԼՑԻ, Աշխարհացոյց, նշ. աշխ., էջ 26-27:

Ոււրընկայր կամ Ոււրընկայ Սը. Նշանի Վանք³⁰,
 Սը. Թոճմայի կամ Ագուլիսի Վանք³⁷,
 Գոմաց կամ Գոմայ Սը. Աստուածածնի Վանք³⁸,
 Սը. Ուաչի կամ Շիւնի Ձորի Վանք³⁹,
 Խաչկայ Վանք⁴⁰,
 Չարհան Սը. Նշանի Վանք⁴¹,
 Հացուհեաց Վանք⁴²,
 Հոռոմայրի Վանք⁴³,
 Միծեռնոյ Վանք⁴⁴,
 Սեւանի Վանք⁴⁵,
 Կամրջաձորի Վանք⁴⁶,
 Վանկոյ Սը. Նշանի Վանք⁴⁷,

36. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԱՐԵՒԻԵԼՑԻ, Աշխարհացոյց, նշ. աշխ., էջ 18 եւ 37: ՀՃՃՄ. ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Վասպուրական-Վանի վանքերը, Հտ. Բ., Վիեննա, 1942, էջ 443-444:
37. ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Վասպուրական-Վանի վանքերը, Հտ. Բ., նշ. աշխ., էջ 684-685:
38. ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Վասպուրական-Վանի վանքերը, Հտ. Գ., Վիեննա, 1947, էջ 927:
39. ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Վասպուրական-Վանի վանքերը, Հտ. Գ., նշ. աշխ., էջ 856:
40. ԻՆՃԻՃԵԱՆ Հ. Ղ. ՎՐԴ., Հայաստան, նշ. աշխ., էջ 76:
41. ԵՐԵՄԻԱ ՏԵՎԿԵԱՆՑ, Ճանապարհորդութիւն Բարձր Հայք եւ Վասպուրական 1872-1873ից, Երեւան, 1991, էջ 280-283:
42. «Հացուհեաց նշան». տե՛ս ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԱՐԵՒԻԵԼՑԻ, Աշխարհացոյց, նշ. աշխ., էջ 33: ՀԱՑՈՒՆԻ ՀԱՅՐ ՎԱՐԴԱՆ ՎՐԴ., Չարչարանաց նըշխարներ Հայոց Գով, «Բազմավէպ», 1933, թիւ 9-10, էջ 402-403: ՆՈՐԱՅՐ ԱՐԲ. ԾՈՎԱԿԱՆ, Հայկական Խաչեր, նշ. աշխ., էջ 14-15:
43. «Հոռոմայրի նշան». ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԱՐԵՒԻԵԼՑԻ, Աշխարհացոյց, նշ. աշխ., էջ 35: ՀԱՑՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ., Չարչարանաց նշխարներ Հայոց Գով, նշ. աշխ., էջ 405: ԻՆՃԻՃԵԱՆ Հ. ՂՈՒԿԱՍ ՎՐԴ., Ատոբարդութիւն Հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 362: ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Գուգարքի Համբերը, նշ. աշխ., էջ 33-42:
44. «Միծեռնոյ Խաչ». տե՛ս ՀԱՑՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ., Չարչարանաց նշխարներ Հայոց Գով, նշ. աշխ., էջ 404: ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Տարոն-Տուրուքերանի Վանքերը, Վիեննա, 1953, էջ 152-153: ՆՈՐԱՅՐ ԱՐԲ. ԾՈՎԱԿԱՆ, Հայկական Խաչեր, նշ. աշխ., էջ 18-18:
45. «Սեւանայ Խաչ». տե՛ս ՀԱՑՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ., Չարչարանաց նշխարներ Հայոց Գով, նշ. աշխ., էջ 405-406:
46. «Կամրջաձորի Խաչ». տե՛ս ՀԱՑՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ., Չարչարանաց նշխարներ Հայոց Գով, նշ. աշխ., էջ 406: ՆՈՐԱՅՐ ԱՐԲ. ԾՈՎԱԿԱՆ, Հայկական Խաչեր, նշ. աշխ., էջ 3-6:
47. «Վանկոյ նշան». տե՛ս ՀԱՑՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ., Չարչարանաց նշխարներ Հայոց Գով, նշ. աշխ., էջ 407: ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Կիլիկիայի վանքերը, նշ. աշխ., էջ 131, 276 եւ 284: ՆՈՐԱՅՐ ԱՐԲ. ԾՈՎԱԿԱՆ, Հայկական Խաչեր, նշ. աշխ., էջ 26-29:

*Ոտտակերաց Վանք*⁴⁸,
*Նորավանք*⁴⁹,
*Ճրպայ Վանք*⁵⁰,
*Տաթևի Վանք*⁵¹,
*Ամիթ քաղաք*⁵²,
*Ապարան գիւղի եկեղեցի*⁵³,
*Գիս գիւղի եկեղեցի*⁵⁴,
*Անիի Սբ. Փրկիչ եկեղեցի*⁵⁵,
*Անի քաղաք*⁵⁶,

*Կը յիշուին դեռ Կոթ կամ Ատիեաման գիւղին եկեղեցւոյ մէջ պահուած Ոսաչ մը (Երկաթէ), որ կ'աւանդուի թէ ձեռագործն է Թաղէոս Առաքեալի*⁵⁷:

48. «Ոտտակերաց Նշան». *տե՛ս* ՀԱՅՈՒՆԻ Է. ՎԱՐԴԱՆՅ՝ ՎՐԴ., Զարչարանաց Նշխարներ Հայոց Գով, *նշ. աշխ.*, էջ 407-408: ՆՈՐԱՅՐ ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ, Հայկական խաչեր, *նշ. աշխ.*, էջ 19-20:
49. «Դիւնայ խաչ». *տե՛ս* ՀԱՅՈՒՆԻ Է. ՎԱՐԴԱՆՅ՝ ՎՐԴ., Զարչարանաց Նըշխարներ Հայոց Գով, *նշ. աշխ.*, էջ 408:
50. ՀԱՅՈՒՆԻ Է. ՎԱՐԴԱՆՅ՝ Վ., Զարչարանաց Նշխարներ Հայոց Գով, *նշ. աշխ.*, էջ 408-409:
51. *Տաթևի վանքին մէջ Ոսաչափայտէն կային երեք բեկորներ. տե՛ս* ՀԱՅՈՒՆԻ Է. ՎԱՐԴԱՆՅ՝ ՎՐԴ., Զարչարանաց Նշխարներ Հայոց Գով, *նշ. աշխ.*, էջ 407:
52. «Ամթայ Նշան». *տե՛ս* ՀԱՅՈՒՆԻ Է. ՎԱՐԴԱՆՅ՝ ՎՐԴ., Զարչարանաց Նըշխարներ Հայոց Գով, *նշ. աշխ.*, էջ 408:
53. «Ապարանից խաչ». *տե՛ս* ՍՐ. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ ՎՐԴ., Մատենագրութիւնք, *Վենետիկ*, 1840, էջ 371-390: ՀԱՅՈՒՆԻ Է. ՎԱՐԴԱՆՅ՝ ՎՐԴ., Զարչարանաց Նշխարներ Հայոց Գով, *նշ. աշխ.*, էջ 406: ՆՈՐԱՅՐ ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ, Հայկական խաչեր, *նշ. աշխ.*, էջ 21-22:
54. «Գիսայ խաչ». *տե՛ս* ՀԱՅՈՒՆԻ Է. ՎԱՐԴԱՆՅ՝ ՎՐԴ., Զարչարանաց Նշխարներ Հայոց Գով, *նշ. աշխ.*, էջ 401-402:
55. «Ապլղարիպի խաչ». *տե՛ս* ՀԱՅՈՒՆԻ Է. ՎԱՐԴԱՆՅ՝ ՎՐԴ., Զարչարանաց Նշխարներ Հայոց Գով, *նշ. աշխ.*, էջ 407:
56. «Նումէի Սբ. Խաչ» կամ «Վամանդայ խաչ». *տե՛ս* ՀԱՅՈՒՆԻ Է. ՎԱՐԴԱՆՅ՝ ՎՐԴ., *նշ. աշխ.*, էջ 406-407: Ասոնցմէ դուրս Ոսաչափայտի մասուհներ կը յիշատակուին Թրինի Կուսանաց վանքին մէջ, Յետանց վանքին մէջ, Մշկավանքին մէջ, Յուսկան Որդւոյ վանքին մէջ, Զորոյ վանքին մէջ, Յրպայ վանքին մէջ, Արծիէ քաղաքի Սբանչիւազործ վանքին մէջ եւ Ակլայ վանքի կամ Անդղայ Սբ. Նշան վանքին մէջ. *տե՛ս* ՆՈՐԱՅՐ ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ, Հայկական խաչեր, *նշ. աշխ.*, էջ 23-25 եւ էջ 33-53:
57. *Տե՛ս* ԵԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՅ ՅՈՒՆԻ Ե. ԵՊՍ., Ստորագրութիւն, *նշ. աշխ.*, էջ 144: Է. Ղուկաս Վրդ. Ինճիճեան կը հաղորդէ թէ Վերին Բազառիճ գիւղին մօտ Սբ. Նշան անուանով վանքին մէջ կար «խաչ պղնձի, գորմէ աւանդեմ բնակիչքմ լինել ի միւրոյ կոմքիմ՝ յորում լուաց Տերմ մեր գոտս աշապիւրտաց, եւ գայմ խաչ գործեալ սանն թաղէոսի Առաքելոյմ, եւ քերեալ

Սուրբ Աղբերիկ Վանքին մէջ կար Յակոբ Տեառնեղբայր կոչուած աշակերտէն օծուած կամ օրհնուած խաչ մը⁵⁸:

Դեղուաց կամ Թեղուտի Սբ. Յովհաննէս Վանքին մէջ ալ կը պահուէր քարէ խաչ մը՝ «Օծեալ ձեռամբ Սուրբ Լուսաւորչին»⁵⁹:

Վարազայ Վանքին մէջ կար «Գետարգել» կամ «Գետադարձ» կոչուած Պետրոս Գետադարձ Կաթողիկոսին Սբ. Խաչը⁶⁰:

- ԿՈՆԻԲ կամ ՏԱՇՏ ՅԻՍՈՒՍԻ (տաշտէն մասունք) Շախուռի Սբ. Աստուածածնի կամ Սքանչելագործի Վանք⁶¹, Սքանչելագործ Սբ. Նշանի Վանք⁶², Ակլ կամ Ակիլ Վանք (Տիգրանակերտի շրջան)⁶³, Սբ. Նշան Սինամուտայ եկեղեցի (Խարբերդի)⁶⁴:

- ԹԱՇԿԻՆԱԿ ՅԻՍՈՒՍԻ Էջմիածնի Վանք (Վասպուրականի շրջան)⁶⁵:

- ՓՇԵՊՍԱԿ ՅԻՍՈՒՍԻ Սբ. Ստեփանոս Նախավկայի Վանք (Մաղարթայ)⁶⁶, Սբ. Էջմիածնի Վանք⁶⁷:

ընդ իւր յաշխարհն Հայաստանեայց» . տե՛ս Հայաստան, նշ. աշխ., էջ 104: Շատ հաւանական է որ նոյն խաչերը ըլլան:

58. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԱՐԵՒԵԼՑԻ, Աշխարհացոյց, նշ. աշխ., էջ 42-43:

59. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԱՐԵՒԵԼՑԻ, Աշխարհացոյց, նշ. աշխ., էջ 41:

60. «Գետարգել Սբ. Նշան». տե՛ս ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԱՐԵՒԵԼՑԻ, Աշխարհացոյց, նշ. աշխ., էջ 38: ԻնձիձեմԱն Հ. ՂՈՒԿԱՍ ՎՐԴ., Հայաստան, նշ. աշխ., էջ 263-264: ՀԱՑՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ., Զարչարանաց Նշխարներ Հայոց Քով, նշ. աշխ., էջ 403-404: Կ'ենթադրեմ թէ այս սրբազան խաչը որոշ ժամանակ մը գտնուած է նաեւ Զաղափանքի մէջ, հմտ. հոս ծանօթութիւն թիւ 33 եւ ՆՈՐԱՅՐ ԱՐԲ. ԾՈՎԱԿԱՆ, Հայկական Խաչեր, նշ. աշխ., էջ 10-13:

61. «Յիսուսի մանուկութեան ատեն լուացուած տաշտն» մասեր կամ մասունքներ են ասոնք. ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Վասպուրական-Վանի Վանքերը, հտ. Ա., նշ. աշխ., էջ 205:

62. ՈՍԿԵԱՆ Հ. Հ. Վասպուրական-Վանի Վանքերը, հտ. Բ., նշ. աշխ., էջ 445:

63. ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Սեբաստիայի, Խարբերդի, Տիարպէֆրիի եւ Տրապիզոնի Վանքերը, նշ. աշխ., էջ 170:

64. ԱԼԻՇԱՆ Հ. ՂԵՒՈՆԴ ՎՐԴ., Արեւմտեան Հայաստան, տե՛ս «Քաղաքավէպ», 1993, թիւ 1-4, էջ 113:

65. ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Վասպուրական-Վանի Վանքերը, հտ. Գ., նշ. աշխ., էջ 805-806:

66. ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑ ՅՈՎՀ. ԵՊՍ., Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի, հտ. Բ., նշ. աշխ., էջ 304-305: ՀԱՑՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ., Զարչարանաց Նշխարներ Հայոց Քով, նշ. աշխ., էջ 409: ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Վասպուրական-Վանի Վանքերը, հտ. Բ., նշ., աշխ., էջ 565-566:

67. ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑ ՅՈՎՀ. ԵՊՍ., Ստորագրութիւն..., հտ. Ա., նշ. աշխ., էջ 66-67:

- ԲԵԻԵՌ ԹԻՍՈՒՄԻ

Աղբերիկի Վանք⁶⁸,
Յովհաննավանք⁶⁹,
Սբ. Ստեփանոս Նախավկայի Վանք (Մաղարթայ)⁷⁰,
Մատնէվանք⁷¹,
Կարմրաւոր Սբ. Աստուածածնի Վանք⁷²:

- ԳԵՂԱՐԴ ԹԻՍՈՒՄԻ

Այրիվանք կամ Գեղարդավանք⁷³,
Սբ. Էջմիածնի Վանք⁷⁴:

- ՇԻՇ՝ ԹԻՍՈՒՄԻ

Աղբերիկի Վանք⁷⁵:

- ՎԱՐՇԱՍՄԱԿ ԹԻՍՈՒՄԻ

Յովհաննավանք⁷⁶,
Ուաչեքարի կամ Վարչամակի Վանք⁷⁷,

- 68. «Ներկեալ արեամբն Գրիստոսի». տե՛ս ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԱՐԵՒԵԼՑԻ, Աշխարհացոյց, նշ. աշխ., էջ 42-43:
 - 69. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԱՐԵՒԵԼՑԻ, Աշխարհացոյց, նշ. աշխ., էջ 27:
 - 70. ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑ ՅՈՎՎ. ԵՊՍ., Ստորագրութիւն..., Հտ. Բ., նշ. աշխ., էջ 305: ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ., Զարչարանաց Նշխարներ Հայոց Քով, նշ. աշխ., էջ 409: ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Վասպուրական-Վամի Վամքերը, Հտ. Բ., նշ. աշխ., էջ 565-567, 578 եւ 592:
 - 71. ՍԻՄԵՆՆԻ ԳՊԻՐ ԼԵՀԱՑԻ, Ուղեգրութիւն, նշ. աշխ., էջ 201:
 - 72. ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Վասպուրական-Վամի Վամքերը, Հտ. Ա., նշ. աշխ., էջ 237:
 - 73. «Գեղարդն սուրբ աստուածամուխ՝ մերկեալ արեամբն կեմարարին». տե՛ս ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԱՐԵՒԵԼՑԻ, Աշխարհացոյց, նշ. աշխ., էջ 14 եւ 30:
 - 74. Այրիվանքէն փոխադրուած է Սբ. Էջմիածին եւ ցարդ կը պահուի Հոն. տե՛ս ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑ ՅՈՎՎ, ԵՊՍ. Ստորագրութիւն..., Հտ. Ա., նշ. աշխ., էջ 47-80: Սիմէոն Գպիր Լեհացին «Գեղարդ» մը եւս կը յիշէ Պարբերդի շրջանին մէջ զտնուող Սբ. Առաքեալ անուանով «ամուսնի» վանքի մը մէջ. տե՛ս Ուղեգրութիւն, նշ. աշխ., էջ 201: Ուրբերդի շրջանին ամէնէն ամուսնի մը Սաքեղոց կամ Ղազարու Վանքը, որ շատ Հարուստ էր սրբազան մասունքներով: Սակայն այս վանքի պատմութեան մէջ «Գեղարդ»ի մասին վկայութիւն մը չկրցայ զտնել:
- Աւանդութեան Համաձայն, Սուրբ Գեղարդը որոշ շրջան մը զտնուած է նաեւ Անգղայ Սբ. Աստուածածին կամ Գարէնից Սբ. Գէորգ Վանքին մէջ. տե՛ս ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Վասպուրական-Վամի Վամքերը, Հտ. Գ., նշ. աշխ., էջ 748:
- 75. ՍԻՄԵՆՆԻ ԳՊԻՐ ԼԵՀԱՑԻ, Ուղեգրութիւն, նշ. աշխ., էջ 201:
 - 76. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԱՐԵՒԵԼՑԻ, Աշխարհացոյց, նշ. աշխ., էջ 15 եւ 27:
 - 77. ԱԼԻՇԱՆ Հ. ՂԵՒՈՆԴ ՎՐԴ., Տեղագիր Հայոց Մեծաց, Վեներաբիկ, 1853, էջ 39: ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Բարձր Հայքի Վամքերը, Վեներա, 1951, էջ 183-185:

*Սբ. Ստեփանոս Նախավկայի Վանք (Մաղարթայ)*⁷⁸:

– ՊԱՏԿԵՐ ՔՐԻՍՏՈՍԻ

*Հաւուց Թառի Վանք*⁷⁹:

– ԽԱՆՁԱՐՈՒՐ ՅԻՍՈՒՍԻ

*Առանց Վանքի մը յիշատակութեան*⁸⁰:

– ՍՓԱԾԱՆԵԼԻ ՅԻՍՈՒՍԻ

*Առանց վանքի մը յիշատակութեան*⁸¹:

– ԾԻՐԱՆԻ ՅԻՍՈՒՍԻ

*Առանց վանքի մը յիշատակութեան*⁸²:

– ՍՊՈՒՆԳ ՅԻՍՈՒՍԻ

*Առանց վանքի մը յիշատակութեան*⁸³:

– ԻՒՂԻ ԾԻՇ, Հայաստան բերուած Թաղէոս Առաքեալէն.

*Եղբրդուտի Սբ. Յովհաննէսի Վանք*⁸⁴,

*Անգղայ Սբ. Աստուածածնի կամ Գաբէնից Սբ. Գէորգի Վանք*⁸⁵:

78. ՀԱՅՈՒՆԻ ՎԱՐԴԱՆ ՎՐԴ., Չարչարանաց Նշխարներ Հայոց Քով, նշ. աշխ., էջ 409, ուր *Հեղինակը կ'ըսէ*. «Վարչարանակ երեսացն Քրիստոսի, ա՛յն որ գերեզմանիմ կ'ըջ կը ծածկէր իւր գլուխը»:
79. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԱՐԵՒԵԼՑԻ, Աշխարհացոյց, նշ. աշխ., էջ 14 եւ 30: Ինձիձեւան Հ. ՂՈՒԿԱՍ ՎՐԴ., Ստորագրութիւն, նշ. աշխ., էջ 269:
